



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 4 ԱՊՐԻԼ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 16

ԱՂՕԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ճ՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ:
Տիրոջ ըսի. «Դուս ես Տէրս, քեզմէ գատ ուրախութիւն չունիմ»:
Ինչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդներով կ'առաջնորդէ զիս,
նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղմտանքիս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է,
հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,
որովհետեւ գիտեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:
Կեանքի նամբան ցոյց կու տաս ինձի.
Ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն է:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վձենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 8:1-13)



ԿՈՒՌՔԵՐՈՒՄ ԶՈՀՈՒՄԸ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ (8:1-13)

Ներկայացնել էքք բարոյական, ու յարկապէս ամուսնանալու կամ ամուրի մնալու, հարցերուն շուրջ քրիստոնէական ճշմարիտ ուղղութիւնը, հեռու պահելու հաւաքացեալները պոռնկութենէ, Պօղոս Առաքեալ կ'անցնի մէկ այլ ուրիշ նիւթի մը, այս անգամ կուրքերուն զոհուած կերակուրներու մասին, որ դարձեալ համայնքը յուզող հարցերէն մէկն էր: Հարց մը, որ կրնայ առանձին նիւթ թուիլ, սակայն խորքին մէջ, անցեալի դրուածքին համապատասխան իրարու կապուած նիւթեր էին պոռնկութիւնն ու կռապաշարութիւնը:

Կուրքերուն զոհուած կերակուրներ, որ սովորական կերակուրի մասին չէ խօսքը, այլ որքան կուրքերու հետ կապուած երեւոյթին: Այս նիւթին հետ միապեղ կար նաեւ մէկ այլ ուրիշ երեւոյթ մը, որ «գիպեն»ի երեւոյթն էր: Երեւոյթ մը, որ կարգ մը հաւաքացեալներու մօտ դարձած էր հպարտանքի առարկայ: Ահա այդ իսկ պարճառով Պօղոս Առաքեալ այս հարցուածով կու գայ բացատրելու եւ ճիշդ ընթացքի մէջ դնելու հաւաքացեալները, որպէսզի այս կամ այն ձեւով պարճառ չըլլան ոեւէ մէկուն գայթակղութեան:

Առաքեալը կը սկսի հետեւեալ արտայայտութեամբ. «"Բոլորս ալ պէտք եղածը գիպենք" ըսողներ կան»: Այս արտայայտութիւնը ցոյց կու տայ, որ Առաքեալը ծանօթ էր համայնքի անդամներուն, ու մանաւանդ անոնց մտայնութեան: Համայնք մը, որ արդէն ամէն ինչ գիպէ, ամէն ինչ ունի, արդէն հարստացած է, արդէն թագաւորած է: Նմանօրինակ արտայայտութիւն մը ունեցաւ Առաքեալը 4-րդ գլխուն մէջ (7-8-ի մը): Համայնք մը, որ պարճանքով ու հպարտութեամբ լեցուն: Ահա այդ իսկ պարճառով Առաքեալը ցոյց կու տայ, թէ այդ փեսակի գիպութիւնը կը հպարտացնէ մարդս, եւ երբ այդպիսի գիպութիւն կայ, որուն մէջ հպարտանք կայ, կը նշանակէ սէր գոյութիւն չունի:

Ճիշդ է, այսօր մենք կրնանք այնպէս մը մտածել, երբ մանաւանդ՝ Քրիստոսի խօսքերը կը յիշեն, ուր կ'ըսէ. «Ի՞նչն է որ կ'ապականէ մարդս: Այն ինչ որ սրբէն դուրս կու գայ, եւ ոչ թէ այն ինչ որ բերնէն ներս կը մտնէ» (Մատթ 15:11): Բայց չմոռնանք կորնթոսի համայնքէն ներս փակաւին կային այնպիսի մտայնութիւններ, ուր հեթանոս քրիստոնէային համար կուրքերը իրական էին, ուստի անոնց զոհուած միտք ուրեւի սրբապղծութիւն էր: Իսկ հրեայ քրիստոնէային համար ամենամեծ մեղքն էր: Իսկ անդին "լայնամիտներ"ը, որոնք կը պարճենային ըսելով "ամէն ինչ գիպենք" դժուարութիւն չունէին նոյնիսկ մասնակից ըլլալու հեթանոսական խնճոյքներուն: Սակայն, այս երեւոյթը գայթակղութեան պարճառ էր անոնց համար, որոնք փակաւին չունէին իսկական ըմբռնումը:

Երբ Առաքեալը կ'անդրադառնայ Կորնթացիներուն արտայայտութեան թէ "բոլորս ալ պէտք եղածը գիպենք" ըսողներ կան, ան չի վիճի, այլ ընդահակառակը կ'աւելցնէ, եւ ցոյց կու տայ թէ գիպութեան նաեւ պէտք է ընկերանայ սէրը, որովհետեւ գիպութիւնը առանձին միջոց մըն է, որ կարելի է օգտագործել բարիի կամ չարի: Ուստի գիպութիւնը կրնայ ըսել. «ամէն բան օրինաւոր է», մինչ սէրը՝ «ամէն բան օգտակար չէ»:

«Ով որ կը խորհի թէ բան մը գիպէ, յարակ է որ փակաւին չի գիպեր, այնպէս՝ ինչպէս որ պէտք է գիպնայ» (2 հմբ): Այս խօսքը ցոյց կու տայ, թէ որքան ալ կը կարծենք թէ գիպենք, փակաւին շատ մը բաներ կան, որ չենք գիպեր, այնպէս ինչպէս պէտք է որ գիպնան: Անոր համար ալ մնայուն զարգացումի մէջ ենք: Բայց երբ այդ գիպութեան կու գայ միանալու սէրը, եւ այս պարագային այդ սէրն է որ մեզ կը կապէ Գիպութեան Աղբիւրին հետ:

«Կուրքերը աշխարհի մէջ բան մը չեն ներկայացներ, եւ թէ միայն մէկ Աստուած կայ» (4 հմբ): Յարակ բացատրութիւն մըն է որ կու տայ Առաքեալը: «Իմաստունին» համար կուրքը պարզապէս կը ներկայացնէ աստուած մը, իսկ «պարզամիտին» համար այդ կուրքին մէջ կար գերբնական զօրութիւն մը: Պօղոս Առաքեալ երկու պարագաներուն համար ալ կու գայ ըսելու ոչ այս եւ ոչ ալ այդ, այլ՝ միայն մէկ Աստուած կայ:

«Մէկ Աստուած, Հայրը, որմէ սկիզբ առած է ամէն բան, եւ մենք իրեն համար կանք. եւ կայ մէկ Տէր՝ Յիսուս Քրիստոսը, որուն միջոցաւ սրբապղծեցաւ ամէն բան, եւ մենք անոր միջոցաւ կանք» (6 հմբ):

Յստակ ու մէկին աստուածաբանական արտայայտութիւն մըն է որ Պօղոս Առաքեալ կ'ընէ: Հայրն Աստուած, որ ամէն բանի աղբիւրն է: Անկէ սկիզբ առած է ամբողջ տիեզերքը, եւ մենք իրեն համար կանք, որ կը նշանակէ ոչ թէ միայն անկէ սկիզբ առած ենք, այլ մեր կեանքի վախճանը իսկ Ինք է: Երկրորդ, եւ ամենակարեւոր արտայայտութիւնը փրում Յիսուս Քրիստոսին «Տէր» արտայայտութիւնն է, որ միայն կը փրուէր Հօր Աստուծոյ, ահա այսպէղ երբ կը փրուի Յիսուս Քրիստոսին, ցոյց կու տայ անոր համագոյակից ըլլալու հանգամանքը: Առաւել եւս, Ռոդին, որ գործնական պատճառն է ամէն բանի, ինչպէս պիտի ըսէ Յովհաննէս Աւետարանիչ. «Ամէն ինչ անով եղաւ ինչ որ եղաւ» (1:1-2): Տակաւին, ոչ թէ անով եղաւ, այլ նաեւ եթէ կ'ապրինք, ինչ որ ենք ու կ'ըլլանք Քրիստոսի շնորհիւ ենք, ու մեր փրկութիւնը անկէ կախեալ է:

Միջանկեալ ու կարեւոր այս արտայայտութենէն յետոյ, Առաքեալը կը վերադառնայ դարձեալ ըսելու համար, թէ «**Բայց այս գիտութիւնը բոլորին քով չկայ: Շարեր կը խղճահարուին կուռքերու զոհուածէն ուրելու**» (7 հմր): Բայց ի վերջոյ, «**ուրելիքը չէ որ մեզ Աստուծոյ ներկայութեան կը բերէ**» (8 հմր), այլ՝ մաքուր սիրտը:

Այո, մաքուր սիրտը, բայց զգոյշ, որ «**ազատութիւնը գայթակղութեան պատճառ չըլլայ փկարներուն**» (9 հմր): Այնպիսի գայթակղութիւն մը, որ կրնայ կորուստի մաքնուիլ հաւաքքով փկար հաւաքացեալ մը, որուն համար Քրիստոս մեռաւ: Յաճախ հաւաքքով փկար մարդիկ եթէ ուզեն հետեւիլ հաւաքքով զօրաւոր անձի մը, որքան զգոյշ պէտք է ըլլալ, որովհետեւ միշտ չէ որ կրնայ հաւաքքով փկարը անոր օրինակին հետեւելով իր ալ հաւաքքը զօրացնել, կրնայ հակառակը պատահիլ: Ահա, այդ իսկ պատճառով Առաքեալը կը զգուշացնէ, որ «**մեղք գործած կ'ըլլաք, անոնց փկար խղճմբանքը վիրաւորելով, եւ այդ ձեռով Քրիստոսի դէմ մեղք գործած կ'ըլլաք**»: Քրիստոսի խօսքերուն համաձայն. «Ինչ որ ընէք ուրիշին ինձի ըրած կ'ըլլաք» (Մատթ 25:40): Ուրեմն, եթէ կը սիրեմ իմ նմանս, որքան ալ գիտութիւնը ունիմ կը կարծեմ, բայց ի սէր իմ նմանին, աւելի լաւ է չուրել, քան գայթակղեցնել ու մեղքի առաջնորդել: